

քայուլեան արժանի ըլլամ նէ ,
պատճառը դուն ես , հայր իմ սիրե-
լի . անոր համար մեռնելէս առաջ մէյ-
մըն ալ ուզեցի չնորհակալ ըլլալ քեզի
որ իրաւցընէ իմ ազատիչս ու հայրս
ես : Ըջթը ըրէ իմ հոգւոյս համար :
Սահուն անկողնէն կը գրէ քեզի աս
թուղթս անկկայ որ յաւիտեան պիտի
օրհնէ զքեզ :

ՌՈՃԵՐ

Ա Ռ Ա Կ

Ընդդ - Ընդդ :

() ր մը աղուաւ ծեր անգղի՝ մը կը
պատահի , կը տեսնէ որ արտում տը-
խուր՝ գլուխը կախած տարակուսած
կեցեր է . “ Ի՞նչ ունիս հայրիկ , ինչու
տրտում ես , ” կ’ըսէ : “ Ս’ի հարցըներ
որդի , կ’ըսէ անգղը . աս մաղձոտու-
թիւնը շատոնց է որ վրաս է . Ի ոգ-
ման բժշկին գնացի ¹ , դեղ մը ուզե-
ցի , պատասխան տուաւ ինծի թէ ատ
հիւանդութեանդ դեղը ան է որ եր-
թաս մէկ լեռ մը կամ բլուր մը գրա-
նես , ուր որ դուն աղտոտած չըլլաս .
հոն կեցիր , կ’ըսենտնաս : () րերով
ամիսներով փնտռեցի , անանկ տեղ
մը չգտայ . աս է ահա տխրութեանս
պատճառը , ” :

Սարգս ուր որ երթայ՝ իր պակա-
սութիւնը հետը կը տանի . ինքն ի-
րեն պիտի մեղադրէ՝ երբոր տեղ մըն
ալ հանգստութիւն չգտներ :

¹ Ագապա :

² Լոգման անունով հռչակաւոր բժիշկը Արա-
բացոց Եսովպոսն է , վասն զի իրէն վարքն ալ
առակներն ալ Եսովպոսներուն շատ նման են :
Արաբերէն անունը Լոգման է՝ Բիւթ - Լոգման իմաստն
ալ կը նշանանակէ՝ Լոգման Բիւթն ալ . ուստի Արա-
բացիք կ’ըսեն թէ աս իմաստունը Արաբահամ նա-
հապետին ժամանակակից էր , ումնք ալ թէ Դաւիթ
մարգարէին տունն էր . ստոյգը յայտնի չէ :

Իսկ ան օգտակար գեղը որ Լոգման բռնու- կը
սուի ռամիօրէն , հոգման բռնու- հասկընալու է .
վասն զի հոգմանն անունով գերմանացի բժշկին
հնարածն է , որ 1662ին ծնած էր Գերմանիա :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Օրհնութիւնս Գիւղեւորի Սէրն Աստուծոյ :

Բ .

ՍՊԱՆԱՆԱՐՈՒՄՍ այլ որքան գործք են քոյն ,
Աստուած իմ , նոյն սիրահարուստք երեկն .
Եւ ոչ ուրեք այնպէս փայլեն անպատում
Որպէս ի փառս ճարտարութեանդ ի մարդում .
Եւ հոգս անգամ , հոգս զի հոգւոյ է գրակից
կամ զի մատանցդ հիւսուած՝ պատմէ զսէրն անբիծ .
Եւ իբրու թագ չըքնաղ ի մէն մի ականս
Ամենկին չըքնաղ են կերպք մարդկութեանս :
Փափուկ սրղայն սրնեալ ի մօրն օշարակ
Ի գիրք ծոցոյն մինչ ընդ երկինս ձգէ զակն՝
Ո՛չ քան ծնողաց սիրոյն քո զանձն ասէ ծնունդ ,
Եւ անիմայ պապալքն օրհնեն սուրբ զանունդ :
Կոյն յամփոփել զկամարագէղ յունից լար ,
Եւ զկարմրութիւն այտին համեստ ածել վայր ,
Կամ յորժամ բուռն երիտասարդ օրինաց
Իբր աւազին չիչնէ գրծել սոնքն ալեաց ,
Եւ կորացեալ ժրտէ յերկրէ զիւր պարէն ,
Ո՛չ հեշտաբար և այնք ըզսէրդ համբուրեն :
Եւ ծեր ճակատն երբ ի վարսից տարագրեծ
Զգանդալ աւուրս ձգելով հանգէ պլուռ աստեղ ,
Բաժանէ զաչս առ քեզ ուսու հոն իւր յետին ,
Որ այլ նեցուկ հրգորքան զսէրն այն հիգին : —
Ո՛հ , և պըճնեալն ի թագ մական ուրի գահոյս
Իշխանն ազանց հրամանահան յընդհանուր՝
Քեզ վերակնէ , մաղթէ պատգամս ի յերկնուտ ,
Եւ ոչ իւրեք բայց քե պարծի գոլ հարուստ :
Եւ մուրկին յորս պատառոյն դուռն ի դրանէ
Եւ զարտասուն անգամ յանուն քո ըմպէ .
Եւ թէ լըքցի երբէք նօթի և ծարաւ ,
Երթեալ նրստի ողորմութեանն ընդ յարկաւ ,
Գիտէ զի անդ ուր հաստատեացն զիւր բոյն
Ի սպառ չկարէ նմա սէրն առնել չքտեսոյն : . . .

Ո՛վ յիշատակ մեծ , յիշատակ աստուածեան .
Եւ տակաւին գանդաղեցիմ յայդ խորան
Մատչել ընդ խումբ բազմաժողով մարդկութեանս
Եւ գրկովին ընդ սէր քո գալ ի պահանջան .
Զի ո՛ւր սաստիկ այնպէս , ո՛ւր վեհ և չըքնաղ
Յայտնիցի սէր՝ քան ի կրօնից սուրբ փարախ :
Լուրձի պարկէշտառ դուրս հընչէ զնեքին շնորհ ,
Անմահութեան նախաշաւիղ լուսաւոր .
Ուր քան զճրագաց ակն հաւատոյ զփայլ սիրոյն
Եւ քան ծաղկանց ըզգայ բուրման սեղանոյն .
Զամէն հասակ անդ տեսանեմ յեւ պղծուն
Ի հողամած ծերոյ ցմանկիկ կաթնասուն ,
Ամենեցուն մի շունչ մի ուխտ և մի սէր ,
Ուղղեալ ըզձեռս և զաչս և սիրտս առ նոյն տէր . . .
Այլ ո՛վ հրաշից հրաշք , ո՛վ սիրոյն մեծութեան
Որ զմեծդ Աստուած առեալ ձրգէ ի սեղան :
Թէպէտ անծախս հուրդ ի վասնէն հանգարտի՝
Թողեալ ըզդոյս , ըզփառս , ըզծոցն հայրենի
Սէրդ անըսկիզբն , ինքնին յընդմեր խորոյկ
Ի ճենձերեւ չափաւորիս , զի կեցցուք .
Ի զգինս հոգւոյ զարկնդ ցոյէս վերջապէս
Եւ սրտաբախ չըրթանցրս տաս զքո մարմին .